Գործ ԵԴ2/30830/02/23

ՈՐՈՇՈՒՄ

հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

28.09.2023թ. **ք.Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր՝ Էդ. Ամալյանս ծանոթանալով՝ «Խաչհար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ՝ Արմեն Օհանյանի կողմից ներկայացված հայցադիմումին ընդդեմ պատասխանող՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ գնման պայմանագրի միակողմանի լուծումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին.

ՊԱՐԶԵՑԻ

Հայցվորի ներկայացուցիչը 22.09.2023թ.-ին հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ պատասխանող՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ գնման պայմանագրի միակողմանի լուծումը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը 22.09.2023թ.-ին մակագրվել է դատավոր Էդ. Ամալյանին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 25.09.2023թ.-ին:

Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում պահպանվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-125-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով սահմանված պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՝Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով համարվում են հաստատված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածների 27.2-րդ գլխի իրավական կարգավորումների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները՝ այն է սույն գործով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Էդ. Ամալյան**